ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Տարուայ վերջին, մէջ գիշերին
Մի ձայն լսուեց երկնքից,
Թէ մի հրեղէն մանուկ ծնուեց
Ժամանակի երկնքից։

Նա գալիս է, ով մանուկներ,
Հազար ու մէկ բարիքով,
Թէեւ մանուկ, բայց խելօք է,
Ինչպէս մեծ մարդ տարիքով։

Ձեզի համար նա բերում է
Տեսակ-տեսակ խաղալիք,
Անուշ-անուշ մրգեղէններ,
Սիրուն-սիրուն հագնելիք։

Ձեզնից ոչինչ չի խնայիլ,
Ինչ որ խնդրէք՝ նա կը տայ,
Բայց մեծերիս... ուրիշ բան է,
Չի էլ նայիլ մեզ վրայ։

Միջնորդ եղէք, ով մանուկներ,
Դուք ձեր արդար բերանով,
Որ մեծերիս էլ ընդունէ
Ձեզ չափ պատուող ու սիրով։

Ձեր սուրբ բերնով աղաչեցէք
Այս նորածին մանուկին,
Որ այս տարի նա շնորհի
Խաղաղութիւն մեր Ազգին։

Եթէ նա ձեր արդար բերնով
Մեր խնդիրքը կատարի,
Այն ժամանակ մենք էլ կասենք-
«Շնորհաւոր Նոր տարի»։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

1883

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՏԱՐԵՄՈՒՏԻ ԵՐԵԿՈՅԻՆ

Տարեմուտի երեկոյին
Մայրս թխեց կարկանդակ,
Մէջը դրաւ հոնի կորիզ,
Իբրեւ բախտի նշանակ

Կորիզն, ասաց, ո՛ւմ որ ընկնի,
Դովլաթաւոր կը դառնայ,
Ո՛ւր որ գնայ, ի՛նչ գործ բռնէ,
Փառք ու պատիւ կը ստանայ։

Կարկանդակը բաժանեցինք,
Կորիզն ընկաւ ինձ բաժին,
Եղբայրներս սրտնեղելով՝
Նախանձեցին իմ բախտին։

«Կոյր է Բախտը» սուտ չէ ասած,
Մեծ եղբայրս փնթփնթաց,
«Մի՞թէ դա է ամենիս մէջ
Աշխատաւոր, բանիմաց»...

Մէկէլներն էլ հաւանեցան
Մեծ եղբօրրս ասածին,
«Իրա՛ւ, իրա՛ւ, չէ՞ր արժանի»,
Միաբերան ձայնեցին...

Մայրըս ասաց. «Խելո՛ք կացէք,
Ահա կը գայ Նոր Տարին,
Նա որ տեսնէ ձեզ կռուելիս,
Պարգեւ չի տալ ոչ մէկին։

Բայց որ տեսնէ՝ դուք սիրով էք
Եւ խռով չէք իրարից,
Այնուհետեւ ինչ որ տղէք,
Չի խնայիլ ձեզանից»...

Այս ասելով նա մեզ տուաւ
Տեսակ-տեսակ մրգեղէն,
Չիր ու չամիչ, տանձ ու խնձոր
Եւ զանազան քաղցրեղէն։

Քաղցրը կերանք ու քաղցրացանք,
Եւ խնդացինք շատ ու շատ,
Զարազ արինք նուռ, սերկեւիլ,
Ունաբ, սալոր, թուզ, փշատ...

Հոնի կորիզն այնուհետեւ
Բոլորովին մոռացանք,
Եւ շատ սիրով՝ իրար գրկած,
Պառկոտեցանք, քնեցանք...

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

1888